ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Կոտայքի մարզի <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ–ի դասվարի (21 դասաժամ) թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անց կացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում, նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է (Ձև 1),

2) Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) անձնագրի պատճենը,

4) ինքնակենսագրություն (Ձև 4),

5) Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ-ի դեկտեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին,Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք. Բյուրեղավան, Ս.Վարդանյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել (0222) 6-54-40 հեռախոսահամարով: